

Չարք Ի՞նչ է սիրողական ռադիոն, ռադիոսպորտը և ի՞նչ է իրենից ներկայացնում ռադիոսիրողական գործը:

Պատասխան Սիրողական ռադիոն շահույթի նպատակ չհետապնդող ռադիոկապ է ռադիոսիրողների միջև, այդ թվում՝ հաղորդակցություն, որն ուղղակիորեն առնչվում է մարդու կյանքի նկատմամբ որևէ սպառնալիքի կամ որևէ դժբախտ պատահարի կանխարգելման, կամ դժբախտ պատահարների հետևանքների վերացման հետ:

Սիրողական ռադիոկայանները չեն կարող օգտագործվել հեռարձակման նպատակով: Կարգավորողը հրապարակում է սիրողական ռադիոյի տարբեր տեսակի թույլտվությունները դասակարգող և նման թույլտվություններ ունենալու համար անհրաժեշտ որակավորման չափանիշները սահմանող կանոններ և որակավորման չափանիշներին համապատասխանությունը ստուգելու ընթացակարգեր: Կարգավորողը հրապարակում է նաև սիրողական ռադիոկայանների գրանցման, տեղադրման և օգտագործման կանոնները՝ գործառնական թույլտվությունների տրամադրման համար: Թույլտվությունը՝ Կարգավորողի կողմից ֆիզիկական անձին տրված փաստաթուղթ է, որը հավաստում է սիրողական ռադիոյով զբաղվելու նրա իրավունքը: Մշտական ազդականչերը ռադիոսիրողներին շնորհվում են համաձայն Միջազգային Ռադիոկապի Ռեգլամենտի: Ազդականչի տրամադրումը և փոխարինումը կատարվում է Կարգավորողի կողմից, ռադիոսիրողի դիմումի հիման վրա՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիայի միջնորդությամբ: Ռադիոսպորտի մարզաձևերի մրցումներին մասնակցելու համար ռադիոկայանների օգտագործման թույլտվությունը և ազդականչերը տրվում են ժամանակավոր, մրցման համար նախատեսված ժամանակահատվածի համար՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիայի կողմից: Ռադիոսպորտը տեխնիկական սպորտի ձև է, որն իր մեջ ներառում է տարբեր համալիր մրցումներ՝ օգտագործելով ընդունիչ-հաղորդիչ ռադիոսարքավորումներ՝ համակցված ընդհանուր ֆիզիկական վարժություններով: Ռադիոսպորտը միավորում է սպորտային ուղղություններ, որն իրականացվում է կապի միջոցով հաղորդագրությունների փոխանցմամբ, տեղակայության մասին ինֆորմացիայի վերհանմամբ, ռադիոսիրողական ռադիոկապի միջոցներով: Ռադիոսիրողական կապը դա տեխնիկական նախասիրություն է, որն արտահայտվում է պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ օպերատորների շրջանում ռադիոկապի կազմակերպման միջոցով՝ հատուկ այդ գործի համար միջազգայնորեն առանձնացված ռադիոհաճախականությունների տիրույթներում:

Ռադիոսիրողական գործը իր մեջ ներառում է ինչպես ռադիոսարքավորումների և ալեհավաքների նախագծում և կոնստրուկտավորում, այնպես էլ ռադիոկապին ուղղված տարբեր մրցումների մասնակցություն: Տարբեր երկրներում ստեղծված հասարակական կազմակերպությունները կամ ասոցիացիաները ընդգրկում են այս երկու ուղղությունները (ռադիոսպորտ և ռադիոսիրողական գործ) և իրականացնելով տարբեր ծրագրեր, իրենց երկրում խթանում ու զարգացնում են տվյալ ուղղությունները:

Ռադիոսպորտի ֆեդերացիան կոչված է համախմբել իր շուրջը բոլոր ռադիոսիրողներին և ռադիոսպորտսմեններին, ստեղծելով կոլեկտիվ ռադիոկայաններ, ռադիոակումբներ, մասնակցելով տարբեր միջազգային ռադիոմրցումների, դրանով իսկ զարգացնելով համապատասխան ոլորտը: